

| Գո Շարայի որկորն է. մեր Շիրակայ
ամբարքն չեն:

Եթէ յապաւած քէ-ն թողնենք իր տեղը,
այն ժամանակ հատածները համաչափ ութա-
կան վանկ կ'ունենան: Իսկ եթէ քէն յապա-
ւենք՝ այն ժամանակ, «որկորն է» խօսքը պի-
տի կարգանք «որկորն է», որ համաչափ ութ
վանկեր ստանանք: Հիմա վորձենք շեշտական
տարազ հաղցնել այս առածին.

Գո Շարայի որկորն է
Մեր Շիրակայ ամբարքն չեն.
v —' v —' v —' v —'

Իսկ նոյն տողը յապաւած քէով միասին.
Թէ քո Շարայի որկորն է
Մեր Շիրակայ ամբարքն չեն

Կարող է նոյն տարազով արտասանուել.
v —' v —' v —' v —'

— Որ նոյն է Մ. Պէշիկթաշեանի «Ո՛հ ինչ ա-
նուշ»-ի հետ, եթէ ուղեհանք համարել շեշտա-
կան.

Ոհ ինչ անուշ եւ ինչպէս զո՛վ
v —' v —' v —' v —'

Կարող էինք այստեղ գոհութեամբ ձեռք-
ներս շիկել եւ կարծել թէ խնդիրը լուծեցինք
արդէն: Բայց այստեղ է, որ իր բովանդակ
բունադատութեամբ հանդէս է գալիս մի ուրիշ
անհրաժեշտ պայման: Դա՛ զտած մասնական
լուծումների հետեւողական գործադրութիւնն
է հնազոյն բարք երգերի վրայ: Վերը բերած
առանց քէ-ի օրինակում «Շարայի» բառը
շեշտուած է իբր Շա՛րայի՛: Ուրեմն սեռական
հոլովի շեշտը վերջին վանկի վրայ եկաւ, ինչ
որ մեր այսօրուան գրական արտասանութեան
տարազն է: Բայց քէ-ով օրինակի մէջ նոյն
բառը շեշտում է այսպէս. Շարա՛յի. որ ա-
րեւելեան արտասանութեան տարազն է: Մի
տեղ կարգալով «որկորն է» եւ «ամբարքն
չեն»՝ ստանում ենք այս տարազով շեշտադրու-
թիւն. v —' v —' եւ բառերը հնչում են իբր
«որկո՛րն է՛». «ամբա՛րքն չե՛ն». իսկ միւս
օրինակի մէջ տարազը նոյն է մնում, բայց
բառերն արտասանուում են իբր. «ո՛րկորն է՛»
եւ «ամբա՛րքն չե՛ն», հետեւապէս երկրորդ
բառը մնում է անփոփոխ: «Որկոր» երկվանկ
է. երկվանկ է եւ պարան բառը. եթէ պէտք է
շեշտական տաղաչափութեամբ արտասանենք

«ո՛րկոր», ապա հետեւողական մնալով այս
սկզբունքին՝ պէտք է արտասանենք նաեւ
պարան: Եթէ Շիրակայ եռավանկ բառն ար-
տասանենք ու շեշտադրենք իբր Շի՛րակա՛յ.
այն ժամանակ պէտք է արտասանենք նաեւ
Ե՛րուանդա՛յ: Որեւէ յաջող համարուած լու-
ծում դրանով իսկ կապում է մարդու ձեռն ու
ոտը եւ ստիպում է նոյն սկզբունքը գործադրել
ամեն տեղ:

Դուք տեսնում էք, որ Գողթան երգերի
տաղաչափութեան խնդիրը ոչ միայն «ղիւրաւ»
լուծելի չէ, ինչպէս կարծում է Լ. Գրէյ, այլ
մի տաժանելի աշխատանք է, որ պահանջում
է անկախ դետիմենտի նախնական հետազոտու-
թիւն:

Մաքարիա (Եգիպտոս)

ՇԱՐԱԿՐՈՒԹԻՒՆԸ

Գրեց՝ ՅՈՎՀ. ԱՍՊԵՏ

Տարեգլուխի օրեր էին. աշակերտներէն
երկու երեքը Կաղանդի վրայ շարադրութիւն
դրած էին. երկուքը՝ ձմեռուան աղուորու-
թիւններուն ու դրօսանքներուն վրայ. ուրիշ
մը՝ անոր խստութեան եւ աղքատներուն թըշ-
ուառութեան վրայ. ուրիշ մը՝ իր ապագայ ե-
րազներուն վրայ եւ այսպէս շարունակաբար:
Մէկը միայն դրած էր տարիներ առաջ ի-
րեն պատահած դէպքի մը մասին, որ իր վրայ
շատ խորունկ ապաւորութիւն ըրեր էր, զոր
երբեք չէր կրցեր մոռնալ:

Իբր հայերէն, իբր դրութիւն խեղճ բան
մըն էր ան տառախալներով լեցուն. բայց իբր
տաւառութիւն, իբր արտայայտութիւն վերին
աստիճանի յուզիչ էր ու հիանալի:

Հեղ ու բարի տղայ մըն էր ան մօտ տասնը-
ութ տարու, շատ ալ աշխատասէր. բայց շատ
ետ էր մնացեր, ինչու որ մէկ քանի եւ լաւա-
դոյն տարիներ կորսնցուցեր էր տարադրու-
թեամբ, անապատներու մէջ, յետոյ դաղթա-
կանութեամբ՝ դէս ու դէն: Հիմա կ'աշխատէր
գիշեր ու ցերեկ, կորսնցուցածը վերաշահելու,
բայց այդ շատ դժուար էր, որովհետեւ տա-
րադրութեան տառապանքներուն մէջ միտքը
շատ մը ցնցուեր ու քիչ մը բթացեր էր: Նոյն-